

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԽՄԲԱԳԻՐ - ՏՆՕՐԷՆ

ԲԻԻԶՍՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Մարտ 4

Թիւ 85 — ԵԲ

هاتراکیداغ غزنه

HANRAKIDAGUE

Journal Arménien Encyclopédique

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան Պոլսոյ համար

50 Դր.

Գաւառաց համար

60 ,

Արտասահման

15 Ֆր.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դեմքեր ու դեպքեր
Մեր հորիզոնին վրայ
Գիտական
Սիրուն դեմք (Հագնեցուքին)
Վիպակ (Իտալիան հասած)
Կտորուանք
Ներկային մեջ
Իմաստասիրական բառարան
Ամուսնալոյծն ապերգանիկ
Ինչ մը խնդուք

Բ. Պ.

Բ. Պ.

Ա. Լ.

» »

Ս. ԲԱԲԵԼԵԱՆ

ԹԵՈԴՈՒԿ

Ե. ԳՕԼԱՆՃԵԱՆ

Ա. Լ.

Ս.

40 փարա 40

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կը ծախուի. 1. Գաւառացի, Արմեն ԷՖ. Զպուգնեանի Դեղարանը. — 2. Սա-
մարիա, Կայարանին մօտ, ծխականառ Յարութիւն Աղա Էթերհանեանի խանութը. — 3. Կա-
մուրջի գլուխը, ջրավաճառ Նեան աղա Օգուկեանի փոլ (նախկին ջրավաճառ Պօղոս ա-
ղայի խանութը). — 4. Զրավաճառ Սեփան աղայի խանութը. — 5. Մարգարեան, Պալեմց,
Ալեքեան եւ Զարդարեան գրատունները. — 6. Բոլոր լրագրավաճառներուն փոլ:

Գաւառներէ ո՛վ որ կը փափաքի ՀԱՆՐԱԳԻՏԱԿի գործակալութիւնն ստանձնել, կրնայ
ուղղակի ՏԵՐԿՆՈՒՄԵԱՆ ղիմել:

ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե՝ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Էսկի Զապեիէ հասցեսի Թիւ 61

1900

ԿԱՐԵԻՈՐ

Անոնք որ կը փափաքին նպաստաւոր եւ շահաւէտ պայմաններով հողագործութիւն ընել պէտք է փութան իրենց ամեն տեսակ մշակութեանց մէջ արհեստական աղբերու կամ հանքային պարարտեցուցիչներու գործածութիւնը ի կիր առնուլ որ կենդանական աղբէն աւելի խնայողական ըլլալով հանդերձ աւելի արդիւնաբեր են :

Առանց պարարտեցուցիչներու մշակութիւն մը կը նմանի առանց իւղի կանթեղի մը :

Ընդհանուր մթերանոց

Խ. ՆԱՇԻՏ

Քիւչիւք Պարնաթան իսան Կ. Պոլիս :

Ուր ձրի կը տրուին ամէն ծանօթութիւնք և տեղեկութիւնք :

ԻՆՉ Է

ԻՍԴԵՐԻՆ

ՈՐՈՐՆՔ ԵՆ ԻՐ ԴԱՐՄԱՆՆԵՐԸ

Ժողովուրդին համար գրուած

Թարգմ. Դրմանեռեհե

Ն. Կ. ՆԱԶԻԿԵԱՆ

ԳԻՆ 5 ՂՐԵ.

Նաղիկեան էփ., որ անընդհատ կը շարունակէ Գերմաներէնէ կարգ մը օգտակար գրքերու թարգմանութիւնն ու հրատարակութիւնը, որոց ամենքն ալ Ժողովուրդին օգտին համար գրուած են Ժողովրդական հեղինակներու կողմէ, այս անգամ իւր ընծայած է շատ պիտանի գիրք մը եւ միանգամայն շատ ի դէպ մանաւանդ հիմա որ ջլագրգոութիւնն իր ծայրագոյն աստիճանին հասած է մեր մէջ : Կը յանձնարարենք այս պիտանի գիրքը մեր ընթերցողներուն, որք կարդալով պիտի սովորին թէ արդի յոռի դաստիարակութեան աղետաբեր հետեւանքներէն մին է « Իսդէրին » : Ահ, որքան « Իսդէրիք » կիներ, օրիորդներ, երիտասարդներ ունինք հիմա : Թող փութան գնել մէկմէկ հատ, որպէս զի գաղափար ունենան իրենց հիւանդութեան, անոր պատճառներուն և դարմաններուն վրայ :

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՄԵԾ ՏՈՒՆ ԹԷՅԻ



Կ. ԵՆՎՐՈՒԵԱՆ

Վ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՄԵՍԱԳԱՆԱԿ ձՈՒ ՄԹԵՐԻ

գերընտիր եւ ամէն ճաշակի յարմար

Որոշ եւ չափաւոր գին

Պահճէ գաբու, ճէլալ պէյ խանի տակ

Թէ՛ Պոլսոյ և թէ՛ գաւառի մեր պատուարժան ընթերցողներուն կը յանձնարարենք սոյն վստահելի վաճառատունն, որ երկար տարիներէ ի վեր պատուաւոր դիրք մը գրաւած է, և ամէն տարի չի զլանար իր թէյի նուէրը՝ ի նպաստ կարօտելոց :

Վստահարար դիմեցէ՛ք և պիտի չգըշջաք :—Վաճառատան մարգային ուշ դրէ՛ք :

ՀԱՉԱՐ ԵՒ ՄԷԿ ԾԱՂԻԿ

ՀՆՏԱՎԱՃԱՌԱՆՈՑ

Կ. Պոլիս, Զօրագծի խանի դէմ Քիւչիւք Պարնաթան խան Թիւ 10

Ձեր հաճոյքի համար ընելիք մշակութեանց մէջ եթէ յուսախար և վրայ տալ չէք ուզեր ձեր գրամն ու աշխատութիւնը, դիմեցէ՛ք վերոյիշեալ հետաւաճառանոցը ուր կը ծախուին երկրիս կրիմային յարմար ճշմարտապէս գեղեցիկ ծաղիկներու եւ համեղ ու արդիւնաշատ բանջարեղէններու հունտեր, որոնց իսկութիւնն ու թարմութիւնն երաշխաւորեալ է :

Խիստ դիւրամասշտկի գիներ

Սոյն վաճառատան մէջ կըր ծախուին նաեւ ամէն տեսակ մշտկութեանց համար մտանաւոր գույք ջիմիտկան աղբեր :

ԿԱՐԵԻՈՐ ԱԶԴ

Հանրագիտակի Տնօրէնութիւնը կրնայ հայթայթել բոլոր վարժարաններու պէտք ունեցած դասագիրքերը, եղած յանձնարարութեանց ճիշդ համաձայն : Ամէնէն մեծ գեղջը կուտայ, առանց ո եւ Է շահու ակնկալութեան : Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք :—Միշտ կանխիկ :

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական և Քաղաքական

ԽՍՀՄ-Ի ՏԵՍԻՍ
ԲԻԻԶԱՆԵՍ. ՊՕԶԱՆԵՐ

Գ. Շրջան

1900 Մարտ 4

Թիւ 85 — ԺԲ

ԴԵՄՔԵՐ ՈՒ ԴԵՊՔԵՐ



ԱՌԻՐ Ներսէս Շնորհալի աթոռն, որ դրեթէ հօթն տարիէ ի վեր թափուր կը մնար, ընդհուպ պիտի ունենայ իր գահակայր։ Ապա ուրեմն այդ գահուն ընտրելին է օրուան ազգային ուշադրաւ դէմքը։ Նոյնպէս հանրային ուշադրութեան արժանի մեծ դէպքերն են այն պաշտօնական ճեպընթաց գործողութիւնք, որք այսպահուս կը կատարուին Ատանայի մէջ, ուր տեղի պիտի ունենայ կաթողիկոսական վերջնական ընտրութիւնը, Մարտ 10ին կամ 12ին։

Թողլով որ ընտրական գործողութիւնք իրենց կանոնաւոր ընթացքը շարունակեն, մեք պիտի քննենք, երկու յօդուածներու մէջ, թէ ինչո՞ւ համար մօտ հօթն ամեր Կիլիկիոյ ընդարձակ

վիճակն անգլուխ, երեսի վրայ թողուցաւ, որոյ հետեւանքն եղաւ անդառնալի, անհաշուելի փառանքու, կորուստներու երկա՛ր չղթայ մը։ Այս հարցում թէ եւ շատ հեռուները կը տանի զմեզ, սակայն առ այժմ պիտի բաւականանանք ըկ հարեւանցի ըսել թէ մեր Պատմաբարանի կամ իրարու յաջորդող կրօն. ժողովներու մէկ սխալ ըմբռնումն է գլխաւոր պատճառը։ Հայ. Եկեղեցւոյ հետ կապուած ազգային վերին շահերը պաշտպանելու գործին մէջ, ի վաղուց անտի անոնց կազմած կարգ մը անտեղի համոզումները, անքաղաքագէտ տեսակէտները շարունակ փաստ պատճառած ազգին։

Ազգին մէջ կան աշխարհական թէ կրօնական կարգ մը մարդիկ որք Կիլիկիոյ Կաթողիկոսը կը նկատեն իբրեւ առաջնորդ կաթողիկոս, ինչպէս Աղթամարինը կը նկատեն իբրեւ վանահայր կաթողիկոս, եւ այս սխալ ըմբռնման իբրեւ հետեւանք յամառաբար կը դաւանին թէ Կիլիկիոյ Կաթողիկոսին բարձրացումը, անոր ազդեցութեան յաւելումը կրնայ տկարացել, կրճատել Մայր-Աթոռոյ հեղինակութիւնն ու ազդեցութիւնը։ Այս դա-

ւանութեամբ, մեր Պատրիարքարանն իբրեւ վիճակաւոր պարզ առաջնորդ մը, Ատանայի առաջնորդը եւ Սոյ վանքին վանահայրը կը ճանչնայ Շնորհալիներու, Լամբրոնացիներու յաջորդը: Կը պահանջէ որ Կիլիկիոյ վիճակն ընտրէ իր Կաթողիկոսը, որպէս ո եւ է վիճակ կ'ընտրէ իր առաջնորդը, եւ Պատրիարքական իշխանութեան յղէ ընտրութեան արդիւնքը ի վաւերացումն:

Մեզմէ ո՞վ չի յիշեր թէ լուսահոգի Տէր Ներսէս Վարժապետեան, Կիլիկիոյ Կիրակոս Բ. Կաթողիկոսէն եպիսկոպոս ձեռնադրուելէ վերջ, այս կուսակցութեան գոհացում տալու համար, պարտաւորեցաւ ուխտագնաց ըլլալ Եջմիածին, եւ Տ. Գէորգ Կաթողիկոսի սիրտն առնել, որպէս զի Պատրիարքական պաշտօնին տանող ուղին հարթուի իրեն առջեւ: Ահա՛ տեսէք այս կարծիքը մինչեւ ո՛ր յառաջ գացած է որ մինչեւ այսքան բարակը փնտռելու կ'ենէ, զի Կաթողիկոսական եւ պատրիարքական կարեւոր պաշտօններուն համար ո՛չ թէ է՛ն կարող, է՛ն արժանաւոր եկեղեցականը կը փնտռէ, այլ Եջմիածնականը, Եջմիածնականը:

Այս սատեցութեան երեսէն է որ Սոյ միաբան եպիսկոպոսները կամ վարդապետները թուրքիոյ Հայոց կամ Պատրիարքական վիճակներու մէջ կարեւոր գաւառի մը առաջնորդութեան, կամ ագգային գործերու մէջ կարեւոր պաշտօնի մը չեն կոչուիր, թէ եւ բացառիկ պարագաներու մէջ բացառիկ շնորհներ եղած են: Ինչպէս երբեմն, նոյնպէս եւ այսօր Ասեցի մէկ երկու բանիրուն միաբաններ երկրորդական, երրորդական թաղերու եկեղեցիներուն մէջ քարոզչի պաշտօն կը վարեն:

Ահա այս անտեղի ազդեցութեան պատճառաւ է որ եօթն խոշոր տարի-

ներ Սոյ Կաթողիկոսական Աթոռը թափուր մնաց, Կիլիկիոյ թեման անհովիւ մնացին, հռովմէականութիւնն ու լուսեւրականութիւնը, սօթուած թեւերով ու քղանցքներով, մեր ժողովրդեան ծոցէն ներս մտան: Այս կուսակցութիւն Կիլիկեցւոց ըսել ուզեց. քանի որ իմ խօսքս մաիկ չընէք, մինչեւ որ իմ ուղած կերպովս, իմ ուղած եկեղեցականս Կաթողիկոս չընտրէք, զձեզ այսպէս երեսի վրայ պիտի թողում:

Սակայն ո՛չ Կայս. Կառավարութիւնը եւ ո՛չ ալ նոյն ինքն Եջմիածնի Հայրապետը այս հայեցակէտով կը դիտեն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կարեւորութիւնը: Եջմիածնի ընդհանրականութեան այս ջերմ պաշտպաններուն յուսախաբութիւնն ո՛րքան մեծ ու դառն եղաւ, երբ նոյն ինքն Եջմիածնայ Կաթողիկոսն իր բողոքոյ ձայնը բարձրացուց իրենց դէմ, հրաւիրելով Պատրիարքարանը որ փութայ, ածապարէ ընտրել տալ Կիլիկիոյ Կաթողիկոսը: Եջմիածնայ արդի Կաթողիկոսն ի՛նքն է որ իր օժած վերջին երեք եպիսկոպոսներուն բացէ ի բաց ըսած է... «Գացէք ըսէք Պատրիարքարանի որ փութայ ընտրել տալ Կիլիկիոյ Կաթողիկոսը, եւ զօրացնել անոր գիրքը, զի... զի... զի...: Երանի՛ Զեզ որ Տաճկաստան կ'երթաք, ես հոս լոկ կապեալ մ'եմ, իմ պաշտօնս լոկ անուանական տիտղոս մ'է, եւայլն:»

Ընդհանրական Հայրապետին այս խօսքերը, զորս կրճատելու հարկին տակ ենք, իրա՛ւ են թէ ոչ: Եթէ իրաւ են, — եւ մեք պատճառներ ունինք այնպէս հաւատալու, — ըսել է թէ եօթն երկա՛ր տարիներէ ի վեր Կիլիկիոյ ժողովրդեան կրած բարոյական եւ կրօն. անթիւ փրկող պատճառն եղած է նոյն անձանց ազդեցութիւնն, որոյ գոյութիւնն յաւէտ դատապարտելի, անտեղի, գոյութեան իրաւունքէ իսկ զուրկ է, ինչ-

պէս ինքն էջմիածնայ Ս. Հայրապետը իր հայրական պատգամով կ'ապացուցանէ: Այս միջամտութեան երեսէն չէ՞ր որ Կիլիկիոյ լուսահոգի Տ. Մկրտիչ Կաթողիկոս, Պատրիարքարանի բռնած ընթացքին պատճառաւ, ոտքը ձեռքը կ'ապուած մնալէն ձանձրացած, զգուած, փորձեց ինքն իր ձեռքով, ինքն իր գլխուն կատարել իր կրցածն ու գիտցածը: Եթէ հանդուցելոյն բռնած ընթացքը յայտնումանց դատապարտելի երեւցաւ այն ժամանակ, ո՛չ նուազ դատապարտելի էր նաեւ Պատրիարքարանի բռնած ընթացքը, որ, ինչպէս ի վեր անդր ըսինք, կ'ուզէր պարզ ու անշուք առաջնորդի մը դերը կատարել տալ անոր: Մեծ ծափ մը պիտի զարնենք, եթէ Պատրիարքարանն իր այնքան յապակիտ, դանդաղկոտ հրահանգներով յաջողած ըլլայ բառնալ այս քաղաքականութիւնը իբրեւ ազգամիտ, եւ մոռցնել տայ անցեալը, ապագային համար ալ համերայնութեան ոգի մը ներշնչելով:

Բ. Պ.



ԿՐԹԱԿԱՆ ՀՈՐԻՋՈՆԵՆ

Եթէ նախորդ Ուսումն. Խորհուրդն ուսուցչական ժողովներ դուրսբերու գրութիւնը հաստատեց, արդի Ուսումն. Խորհուրդն ալ Մանկավարժական Լսարան մը հաստատելով նոր Գլուխ մը բացաւ մեր դպրոցական տարեգրութեան մէջ: Անցեալ Կիրակի, Փետր. 27, ճշմարիտ հաճոյք մ'էր տեսնել այդ Լսարանի բացումը, ուր երկու Պատ. ուսուցիչներ, Պէրպէրեան եւ Ծալեան, սիրգոն ըրին իրենց հրապարակային դասախօսութեանց, առաջինն Հոգեբանութեան և երկրորդը Բարոյագիտութեան վրայ ճառելով: Ուսումն. Խորհուրդոյ հրաւէ-

րին փութացած էին պատասխանել իբր 200 ուսուցիչներ եւ ուսուցչուհիներ, արդարեւ պատկառելի թիւ մը, նոյնքան պատուաբեր ատենաբաններուն որքան պատուաբեր ուսուցչական դասուն:

Բարեգէպ զուգադիպութեամբ, մը Հանրագիտակի հրատարակած Խմաստախրական Բառարանին այս շաբթուան մասը ամփոփ տեսութիւն մ'է հոգեբանութեան վրայ, որ կրնայ նկատուիլ Պէրպէրեան էջմի. ի մաստալից բանախօսութեան հակիրճ ամփոփոյթը: Այս առթիւ աւելորդ է ըսել թէ Հանրագիտակ յառաջիկայ թուով իսկ պիտի սկսի հրատարակել Տեսական եւ Գործնական Մանկավարժութեան վրայ ամփոփ դասախօսութիւն մը, հետեւողութեամբ նշանաւոր մանկավարժներու, ինչպէս կը շարունակէ հրատարակել երկրագործական ամփոփ դասախօսութիւն մը:

* * *

Երբ Ուսումն. Խորհուրդ մը, առանց ո եւ ե նիւթական նպաստի, այլ կամքով, բարի տրամադրութեամբ կը յաջողի մանկավարժական Լսարան մը բանալ, կոչում ընելով միայն մէկ քանի կարող ու ձեռնհաս ուսուցիչներու յօժարութեան, ճրի դասախօսելու համար, ինչու՞ համար կրօն. ժողովն ալ նոյն այն բարի տրամադրութեամբ չփորձէ Բազմապատկան Ընծայարան մը բանալ, լսարանական դրութեամբ, քանի որ իրեն մէջ իսկ չեն պակսիր կարող եկեղեցականներ, բաւական է որ աշխարհական ուսուցիչներու պէս յանձն առնեն ձրի ուսուցանել և քանի որ ձրի առեւ եւ տուէն ալ իրենք կը քարոզեն: Կրօն. իշխանութեան ուղադրութեանը կը յանձնենք այս կէտը, եւ կ'սպասենք տեսնել Ընծայարան-Լսարանի մը բացումն ալ:

Բ. Պ.



ԳԻՏԱԿԱՆ

Թե ինչպէս կը ծագին ու կը կազմակերպուին
միգամածները

[Շար. Թ. Թիւէն]

Նիւթին սկզբնական մասնիկներն եղող
արարչագործ հիւլէներն երբ այլեւս կազ-
մուած են, իրենց նախնական վիճակին մէջ
առաջին անգամ աչքի չերևնալու կամ գո-
յութին չունենալու չափ չփոթ, աղօտ ե-
րեւոյթ մ'ունին, սակայն սա միակ իրո-
ղութեամբ թէ անոնք նիւթ են, իրենց նա-
խասահմանաւ առաջին օրէնքին կը հնա-
գանդին, փոխադարձաբար զիրար քաշելով,
այսինքն իրարու հետ մերձաւորելով Անոնց
միաւորում կամ միասնացումն այնքամ'իյայտ
գալով, անջրպետին անհունութեան մթին
խորը կ'երեւի. հազիւ գոյութիւնն զգալի
լինելու շափ կաթնորակ ճերմիկ բիծի մը
պէս, տեսակ մը անորոշ, աչքով աննշմարե-
լի աղօտափայլ լուսակիւղումի մը նման:

Այս անորոշ, անորակ, աղօտանշոյլ ե-
րեւոյթը նոր կազմուելու, ձեւանալու վրայ
եղող առաջին միգամածի մը նշանն ու
յայտնութիւնն է: Սե'րմն է այն մեր տիե-
զերքին համանման ուրիշ տիեզերքի մը՝ որ
կ'սկսի գոյանալ, ստեղծուիլ, Գիտնալու-
ննք թէ անհունին մէջ հիւլէներն ընդմիջտ
սոյն եղելագործութիւնը կ'կատարեն ա'յն-
քան շատ ու յարաժամ՝ որքան սերմերը
երկրիս վրայ կը բուսցնեն բոյսերն ու ծա-
ռերը, անհաշուելի բաղմութեամբ ու առա-
տութեամբ, Աշխարհի բոլոր ծովերուն գե-
տերուն ու լիճերուն մէջ, ամէն օր, ո'րքան
ծուկեր կը ծնին ու կը լողան, նո'յնքան ալ
միգամածներ կը ծնին, կը գոյանան, ու նո-
րանոր տիեզերքներ կը յօրինեն, կը կաղ-
մակերպեն անհունին մէջ:

Իրենց այս նախնական ու հեռաւոր վի-
ճակին մէջ՝ միգամածներն այլեւայլ ու քմա-
ծին ձեւերով կ'երեւին: Այն ճերմիկ թե-
թեւաշարժ ամպերը՝ որք իրենց մոխրափր-
փուր արեւատումներով, հողմավար կը ծա-
ծանին հորիզոնին գորշ ու մթնիկ կողե-
րուն վրայ, կրնան երբեմն միգամածներու

օրինակը մեզ ընծաւել և անոնց վրայ ճըշ-
գրիտ գաղափար մը կազմել տալ մեզ: Ո-
մանք դիտաւոր աստղերու յատուկ ձեւն ու
ծաւալը կ'առնուն. այլք անորոշ, խառնա-
փնդոր ձեւով զանգուածի մը կերպն ունին,
որ ինքն իրեն վրայ գալարուելով իր կեդրո-
նի մասերուն մէջ տեղ տեղ պարապներ կը
թողու. կան ալ որ թափանցիկ, փայլուն,
ոլորածոյ մանուածապատ ահագին երեւոյթ
մը կ'զգենուն, որ անսահման մեծութեամբ
խոշորացած խղունջի մը ձեւն ունի. ուրիշ-
ներ իլի, աղեկատի ձեւով. վերջապէս ու-
րիշ մ'ալ ստեղծագործական բոլոր այս
խառնափնդոր ձեւերուն իրրեւ պսակ՝ մէջքը
հաւմ կուշտը ներսխրուած, կոտրած մեծ Օր
մը մանուածապատ ձեւը կ'առնու:

Հաւասարակշռութեան ո' և է պայմանէ
զուրկ երեւցող հիւլէական այս քմահաճ
կուտակումները, մեքենական ծանօթ օրի-
նաց համաձայն, յայտնի է թէ չեն կրնար
մնալ իրենց միջտ տեսնուած այս միեւնոյն
անորոշ ու խառնակ վիճակին մէջ: Իրենց
այս վիճակը կը ներկայացնէ անհունին ծո-
ցին մէջ՝ հիւլէներուն սկզբնական գոյաց-
ման զանազան կերպերը, և իրենց ստեղ-
ծարանն եղող աշխատանոցի սահմաններուն
նախագիծ հետքերը:

Ժամանակը տակաւ առ տակաւ զանոնք
հարկաւորապէս կը ձեւաւորէ, կը կանոնա-
ւորէ՝ հպատակեցնելով զանոնք, արարչու-
թեան տիեզերական ներդաշնակութեան օ-
րինաց և կանոնաց համեմատ, հետզհետէ ի-
րենց աւելի կանոնաւոր, բուն բառն ըսե-
լով, իրենց մաթիմատիգական ձեւերուն:

Միջոցին մէջ ինքն իրեն ձգուած ամէն
հոսանուտ զանգուած, իր մասնիկներուն
ձգողական ուժէն մղուած, բնականօրէն կը
ձգտի կլոր ձեւ մ'առնուլ: Այս երեւոյթն
արդէն ամէն օր ամենուս աչքին առջեւ իր
սովորական փորձն ու բազմադիմի օրինակ-
ներն ունի: Ծառերու տերեւներէն, կամ
ջուրը թաթխուած մեր ձեռքի մասնիկէն վար
կաթած կայրակը կլոր ձեւ մը կ'առնու: Եթէ
աստեղային կամ արեգակնային միջնաշխար-
հաց կամ հաստաաութեան անջրպետներէն
ո' և է սահմանի մը մէջ, մաս մը ջուր կամ
կազ առանձին տեղ մը ամփոփէիք, պիտի
տեսնէիք թէ այս երկու մարմիններն ալ

գնտակերպ կորկեկ ձեւ մը պիտի առնէին : Անհունն ու տիեզերքը լեցնող եթերին ծոցին մէջ գոյացած հիւլէներու այս ահագին կուտակումները , անյարգ զանգուածներն ալ բնականաբար այսպէս կ'որո ձեւ մը կ'առնուն :

Արդէն ըսինք թէ եթերին հիւլէներն իրենց անկողնի վիճակէն հետզհետէ կը շարժուին վիճակի մը անցնելով ո՛րքան տակաւ կը գոյանան , կը ծնին , զիրար դէպ իրար կը քաշեն , նեւտոնի անունն անմահացնող տիեզերական ձգողութեան օրինաց համաձայն , որոյ գիւտը թէեւ նոր է , սակայն գոյութիւնը նիւթին չափ հին է , և ոչ միայն հիւլէները փոխադարձաբար զիրար կը քաշեն , ինչպէս արեւն և իր սահմանին մէջ գտնուող մոլորակները , այլ նաև տարրաբանօրէն իրարու հետ կը բաղադրուին , իրարու հետ իրենց ունեցած մասնաւոր յարակցութեան , խնամութեան օրէնքի մը համաձայն :

Քիմիական կամ տարրագիտական ստեղծարար այս նոր աշխատողութիւն եթերէն գոյացած հիւլէները մասնիկներու կը վերածէ , և հետեւաբար միգամածային զանգուածը հիւլէական վիճակէն մասնկային վիճակին կը փոխանցէ : Միգամածին ծագումէն , ծնունդէն սկսեալ իր գոյացման համար կատարուած աշխատութիւնն ուրեմն մեքենական և քիմիական կամ տարրաբանական է միանգամայն , և ձեւի փոփոխութիւն մը ու վիճակի փոփոխութիւն մը ի միասին յառաջ կը բերէ :

Թէ ո՛րքան ժամանակի կարօտ է կրկին վիճակներու այս փոխանցումները կատարելու համար հարկ եղած աշխատութիւնը : Այս տեսակ գլխու պտոյտ ու խելայեղութիւն պատճառող հաշիւ մը կատարելու , գտնելու տարրները , յայտնի է թէ , կը պակսին : Ամենէն նշանաւոր հաշուագէտներն իսկ կը սոսկան այս տեսակ հաշիւէ մը :

Անհուն , անթիւ դարերու մէջ կը կատարուի այս աշխատութիւն :

Միգամածներն այսպէս միլիառաւոր դարերու աշխատանքէն յետոյ՝ երբ իրենց խառնափնդոր ձեւը բուն իրենց վերջնական կ'որո ձեւին վերածել կը յաջողին , իրենց այդ վիճակին մէջն ալ դեռ միեւնոյն տեսարանը , միեւնոյն ձեւը չունին : Մեր օրերը հեռագիտակով տեսնուած

միգամածներն , իրենց այս կ'որոթեան հասած վիճակին մէջ , նշանակելի աննմանութիւններ կը ցուցնեն : Ոմանք չըջանալի պէս կ'որո են , ոմանք կոնաձեւ , ձուաձեւ , և ոմանք ալ օղակաձեւ են , որոց մէջտեղը ազօտ , անորոշ կ'որիզ մը կ'երեւի , կամ պարապ մը կայ , որուն մէջտեղէն կ'երեւի երկինքին մթնկեկ խորը :

Ձեւերու այս պէսալիսութիւնը սա՛ կ'ապացուցանէ թէ դեռ մասնիկները կատարելապէս միացնելու , իւրացնելու վերջնական աշխատանքն աւարտած չէ , վասն զի մեքենական ծանօթ օրինաց համաձայն , վերջնական ձեւը գնտակերպ լինելու է : Միգամածներն իրենց այս կանոնաւոր վիճակին մէջ , հիւլէական վիճակի մէջ իրենց ունեցած տարածութենէն , նուազ ծաւալով տեղ կը բռնեն , և նուազ ճասպաղ , նուազ անորոշ կերպով կ'երեւին :

Այսու ամենայնիւ դարձեալ իրենց այս վիճակին մէջ , միլիոնաւոր միլիոն մոլոններով մեծ տրամագիծ ունին . ամէնէն պղտիկ միգամածը պարզ միլիառներով տարածուն տեղ ու տրամագիծ մ'ունի երկինքին մէջ : Ա՛լ երեւակայեցէք թէ մարդուս խելքը գլխէն թռցնելու չափ ո՛րքան անհաշուելի ընդարձակութիւն ունի երկինքը՝ այսինքն անջրգեալ , անհունը , որուն մէջ ամէն օր նոյնքան նորանոր միգամածներ կը ծնին՝ արդէն ծնած գոյացածներէն զատ , ո՛րքան բոյսեր , ցամաքին վրայ և ո՛րքան ձուկեր ծովուն մէջ : Սակայն ձուկերու ու բոյսերու պէս օրէ օր չեն սպառիր , անհունէն բղխած են յախտեան ապրելու համար , և անոնցմէ գոյացած տիեզերքներուն մէջ հետզհետէ գոյացած ծայր աստիճան պղտիկ և բնակելի մոլորակին քով մեր մոլորակն այնքան փոքր է որքան ազացուած ցորենի մը ալիւրին անտեսանելի լինելու չափ վերջին մասնիկն ու հիւլէն Մասիս կամ Տաւրոս լեռներուն քով : Անձնիւր մարդ այլևս երկրի վրայ իր գրաւած տեղին և ներկայացուցած անձին մեծութեան կամ համեմատութեան չափը գտնելու համար , չունչանի պէս թող դարձնէ ու դարձնէ խելքը , կամ հարէ ու հարէ խելապատակին խնոյիին մէջ իր թանկագին ըզեղը :

Շարունակելի

Ա. Լ.

Ք Ե Ր Թ Ո Ւ Ա Մ

Ս Ի Ր Ա Կ Ա Ն Դ Է Մ Ք Ը

Մառախլապատ կեանքիս աղօտ հորիզոնին անդր ի վերեւ,
 Լուսածիծաղ առաւօտն ես որ կ'այգորես նոր օրն ինձ միշտ.
 Մարը մտած արեգակիս ամպէն դարձող վա՛ռ ճառագայթ,
 Քեւ սգաստուեր իմ գիշերներ կը ցերեկնան աներեկոյ.
 Նոր Մայիսով կը ծաղկընայ թօշնունն հոգւոյս աշնանազայր.
 Թարթիչներս թրջող արցունքն սփոփանքի ցող կը չողայ.
 Նորահրատ ա՛ստղ կը վառիս սառած յոյսիս բեւեռին կող.
 Առ որ անձկանքս յագնալեկոծ միշտ նաւարկու պիշ ակն յառին:

* * *

Հոն՝ ուր պատկերդ ես կախած եմ, մատուռն է միշտ երեքսրբան,
 իմ սէրս՝ հոն միշտ սաղմոսերգու, սիրտս՝ բուրվառ, ես՝ քահանայ,
 Հոգիս հոն տեղ՝ կախուած կանթե՛ղ երազներովդ հալում, հատնում:
 Քեզ աղօթք են խօսքերս ամեն, աղօթքներս ալ՝ քեզ ներբողներ,
 Կայծ մը աչքէդ, փայլա՛կ սիրոյ, հրովդ հոգիս կը բռնկէ.
 Հայեացքիդ մէջ դեռ կը վառի, ա՛խ, մոխրացած կեանքիդ կրակ.
 Շրջանակէդ՝ ուր գունագեղ հայլիանայ դէմքդ աղուոր,
 Թուիս դեռ այն սիրուն հրեշտակ պատշգամէդ մեր գիրկ թռող:

* * *

Շնորհն ու գեղն հոսեն բոցեր դեռ ամօթլեւած այտերդ ի վար,
 Սիրոյդ աւերց յիշատակը վեստեան կրակ պահեն առ մեզ.
 Նունեայ շրթանցդ անոյշ ժպիտ բուրէ հոգիդ սիրածաղիկ.
 Գեղագանգուր խոպուպիքդ՝ պսա՛կ գլխոյդ արծաթճակատ.
 Շիջեալափառ վեհութեանդ դափնեայ թարմ շուք դ՛ուսովքդ հոսին:
 Քո փուզուած գեղեցկութեան սիրապատում մէն մի նշխարք
 Անթօշնելի յիշատակաց փայլատակն են մեր ամպոց մէջ.
 Թէ մոռնամ քեզ, թող մոռնայ զիս եւ իմ աջը, ո՞՞ Սիրական:

* * *

Ո՛ր խորվիրապ անդունդները, ո՛ր խորխորատ գուփն ու փոսը
 Պեղեն, փորեն ու փեռեկեն անջատումի խրամատը
 Իմ ու քու մէջ, ո՞՞ վեհանոյշ սիրական դէմքդ անզատչելի.
 Քեզ սիրահար անզուպ հոգիս մթնոլորտն է ու ովկէան
 Ոյց ո՛ր մըրկունք, ո՛ր կայծակունք ճեղքեն, պատռեն, հերկեն կուրծքը,
 Անհետասոյց քնկուղանքին, ամպհարումին մէ՛ջն անգամ իսկ
 Պիտի մնայ միշտ աղէխառն եւ ուժգնապիլի փարած սիրոյդ,
 Լեա՛րդ Պրոմէթեան, զոր կրծող անգղն իսկ պի՛ գտնէ մեզ մշտաճուն:

* * *

Յորդի՛ սէրդ յիս, հեղեղատէ՛ հունն ու թումբը թէ ընդվզին,
 Թէ դուլ, թոյլ տան սիրոյս փրփրուն պախուցաթափ հեղեղներուն,
 Ընդդէմ ժայռին մենամարտող սանձակոտոր խեռ կոհակը
 Մովեգերքին փոշեաց վերայ լինի ամբողջ ալեակն անդորը,
 Եւ հեղասահ բերրին առուակ, գետափին գորգ մարգաց գողը,
 Թէ խորտակէ մահն իսկ կեանքս, անոր համրած մէն մի արեւ,
 Հորիզոնէն գրեզ պիտի նոր արշալոյս վաղորդայնէ:

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Նորէնոֆ՝ որ սքանչելի անձ մըն է, և քուզինս՝ Ֆիմին՝
հրեշտակ մը պարզապէս:

Ու, շունչը բռնած, պատասխանին կ'սպասէր անձկու-
թեամբ, վասն զի գիտնալով թէ ո՞ր աստիճան վահէ կ'ար-
համարէր ընկերութիւնները, թէ որքա՞ն զգուած էր մար-
դոցմէ ու հաճոյքներէն, — ապա գոհակութիւններէն — կը
վախնար որ մերժուէր:

Բայց սակայն վահէ՝ հակառակ իր այդ նկարագրին եւ
մանաւանդ այդ իրիկունը դեռ երկար ժամեր հոտ՝ մինակը
ինքնահայեցութեանը մէջ մտախոհ մնալու հոգեկան պէտքին՝
չը գիտես ի՞նչ տառապագին ու պաղտոտագին բան մը նշմա-
րեց Տիրանի ձայնին մէջ, որով անկարող զգաց ինքզինքը՝
մերժելու այդ խորհրդաւոր հրաւերը:



ԹԵՐԹՕՆ ՆԱՆՍԱՐԻՏԱԿԻ

1851

Բ



ՐկՈՒ բարեկամները, ժամ մը վերջը, այդ վիլ-
լաին առաջնորդող գեղեցիկ ճամբայէն կը յառա-
ջանային տխուր ու մտազբաղ:

Բնակութիւններէ ու քաղաքային ժխորէ հե-
ռու և բանաստեղծական վեհաշուք տեսիլ մը ընծայող այդ
չէնքին կառուցումը ոչ թէ դիպուածի կամ քմահաճոյքի՝ այլ
բարոյական կարեւոր սկզբունքի մը արդիւնք էր: Տիրանի
մօրեղբայրը հայր էր, և կոնուսէն կարենալով նշմարել իր
մէկ հատիկ աղջկան՝ Ֆիմին՝ մտքին ու հոգիին բարձր, ե-
զական խոստումները, տեսակ մը սեւեռամտածում ունեցած
էր. ընել ինչ որ պիտի ձգտէին զարգացունել Ֆիմին՝ նոյն
ուղղութեան մէջ: Արդ՝ Քաղաքը, կը խորհէր, որքան
յառաջդիմական ոգի՝ նոյնքան ալ գարշելի աղէտքներու և
բարուց ասպականութեան միջրոպները կը պարունակէ իր
մէջ: Հեռուէն շնչելու է այդ շունչը, Քաղաքակրթութիւնը,
վասն զի՝ հեռանալով Ան իր աղբիւրէն՝ պիտի թողուր իր
միջրոպները, ինչպէս ջուրը՝ որ իր ընթացքին մէջ կը թո-
ղու հետզհետէ իր աղտեղութիւնները:

Ասկէ զատ չ'ունենալով ալ շատ մեծ վստահութիւն այն
միտքերուն ու ձեռքերուն որոց կուրօրէն կը յանձնուի աղ-
ջկան մը մէջ մօր մը հոգին կազմելու վսեմ գործը, ինքն իր
վրայ առած էր Ֆիմին կրթութեան հոգն ու խնամքը:

Այսպէս մոլորեցնող տարրերէ հեռու, գրեթէ գիղջ-
կական կեանքով սնած և իր հօրը մտքին բեղուն, առողջ
գործունէութեամբ զարգացած, ծանրախոհ, քաղցր, ինք-
նատիպ աղջիկ մըն էր եղած Ֆիմին:

Քաղաքէն հեռու ապրիլ՝ ընկերական շրջանակներէ ալ
հեռու ապրիլ ըսել է, բարեկամներ չ'ունենալ ուղեւ է: Արդ՝

վիլլան այցելող բարեկամներ չի կային բացի Տիրանէն՝ Ֆի-
միի հօր միակ ճշմարիտ բարեկամը, գնահատած միակ ազ-
նիւ անձը, և զոր իր գաւկին պէս կը սիրէր :

— Տիրան, ըսած էր օր մը, գիտե՞ս, Տիրան... կեանքիս
մէջ մեծ վիշտ մը ունեցած եմ...

Եւ դառն տրտմութեամբ մը.

— Վասն զի, ազնիւ քեռորդիս, տարիներու փորձառու-
թեանս մէջ տակաւին քեզմէ զատ չը կրցայ մէկը տեսնել
Ֆիմիին արժանի կեանքի ընկեր մը :

Այս խօսքերուն դէմ՝ այդ վայրկեանին՝ Տիրան կարծեց
թէ պիտի մարէր. տագնապեցաւ, լալ ուզեց, խօսիլ, եր-
կարօրէն ամէն բան խօսիլ, յայտնել ուզեց : Ա՛խ, կը սիրէր
ան Ֆիմին, երկար ատենէ ի վեր յիմարի պէս կը սիրէր, կը
պաշտէր Ֆիմին : Բայց իր բուռն սիրոյն գոռացող ու պայ-
թիլ ուզող բոլորքը— թերեւս այդ բուռն սիրոյն իսկ ներշն-
չած գերմարդկային անձնապոհողութեամբ— խղիւժած էր իր
թշուառ սիրտին այրող ծալքերուն մէջ, քանի որ այդ խոս-
տովանութիւնը պիտի նկրտէր վրդովել անմեղ ու գերզգա-
յուն այն կոյսը՝ զոր բնութիւնը իր մօրեղբորդուստրը՝ իր
Բոյրը սահմանած էր :

Պէտք էր ուրեմն լուռ մնալ հիմա ալ, պէտք էր զսպել
խօսելու մարմաջը, կլլել կոկորդին մէջ լեցուող արցունքները
և մինչեւ իսկ չը հասկնալ կեղծել թէ ի՞նչ կ'ըսէր...

Եւ ըրաւ այս տառապեցնող անհաւատալի գոհողութիւնն
ալ :

Բայց սակայն, այս վերջնոյն մէջ ա՛լ կ'զգար թէ սպա-
ռած էր իր կամքին ամբողջ կորովը, կ'զգար թէ ալ չի՛ պի-
տի կրնար դիմադրել ներքին այն բուռն ուժին որ քանի՛
քանի՛ անգամներ իր էութեան խորքերէն վեր ելնելով ան-
դիմադրելիօրէն՝ գինքը Ֆիմիի կուրծքին վրայ նետել ու-
զած էր, Ֆիմին իր կուրծքին վրայ սեղմել փորձած էր... :
Է՛հ, ի՞նչ... իրա՞ւ... ալ չի՞ պիտի կրնար ինք ի՛ր քր չը

«բաժինը, քիչ մը տարօրինակ, չըսենք նուաստացուցիչ
«կերպով աչքի կը զարնէ արական երիտասարդութեան ան-
«տարբերութիւնը, չըսեմ ծուլութիւնը, թէ՛ երաժշտու-
«թեան և թէ գեղարուեստի ամէն ճիւղերու մէջ : Ազգ. Հի-
«ւանդանոցի ու ամէն բարեգործական նուագահանդէսներու
«մէջ մի՛շտ եւ միմիայն իգական սեռը երեւցաւ : Ի՞նչ կ'ը-
«նեն մեր երիտասարդները. ա՛յնչափ զրադեալ են որ պա-
«ճրապ ժամեր չունին գեղարուեստի նուիրուելու, թէ չէ
«զուարճութեան և հաճոյքի աւելի նուրբ ու աղնուագոյն
«աղբիւրներ գտած են :»

Այս անշըջահայեաց ու աղուոր սննդառութենէ ու մարսո-
ղութենէ մը ետքը գրել փորձուած յօդուածը կարդալէ յե-
տոյ, փոխանակ կատղելու, չես գիտեր ինչո՞ւ, սակայն, ու-
րախ արտայայտութիւն մը առաւ Տիրանի դէմքը :

— Վաճէ՛, ըսաւ յանկարծ, գրեթէ զուարթ ու առանց
յօդուածին մասին գաղափար մը յայտնելու, Վաճէ՛, ժամ
մը եղաւ և դեռ չըսի քեզի այս գիշեր հոս մասնաւոր նսպա-
տակով մը եկած ըլլալս, վաղը ճամբորդ եմ :

— Ի՞նչ, հոսկէ կը մեկնի՞ս... իրա՞ւ կ'ըսես... ինչո՞ւ...

— Է՛հ, ոչինչ, կեանքիս մէջ կ'ուզեմ քիչ մը փոփոխու-
թիւն մտցունել, վերջին գիշերս է այս... ու չեմ ուզեր
կորսնցունել այս քանի մը ժամերս :

Վաճէ Տիրանի կը նայէր դեռ շատ բան չը հասկցած,
մինչ Տիրան կը վարանէր խօսքը ամբողջացունելու :

— Պիտի փափաքէի որ, շարունակեց անապարանօք, կար-
ծես յաղթելու համար իրեն վարանում առթող մտածումնե-
րուն, պիտի փափաքէի որ այս գիշեր քեզի հետ մէկտեղ
մօրեղբորս վիլլան երթայինք՝ հոն վայելելու համար քեզի
ու դաշնակի, ինծի միտցած վերջին քանի մը ժամերուս մէջ.
կ'ուզեմ, նաև, հոն ծանօթացունել քեզի մօրեղբայրս՝

ԹԻՐԹՕՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ

յուն վրայ որ ատեն մը իր երազներուն ոսկեկառուց դըդ-
եակներն եղած էին : Իսկ այս մարդն ալ հիմակ իր միտքը
կը ձգէր անշուշտ այն ուսմիկ ու զազրալի արարածները՝ ու-
րոնք յառաջդիմութեան թշնամիները եղած են . չը կրնալով,
չը դիտնալով ոչ միայն ճանչնալ ու խրախուսել բարոյապէս
ու նիւթապէս բազդէն վտարուած թշուառ մը . զոհ մը,
գթալ ու մեղմացնել ձգտիլ անոր տառապանքները, այլ
փութալով իսկ յուսահատեցնել զանի ու մեռցնել անոր հո-
գին, եռանդը, տաղանդն ալ :

Եւ Վահէի չափ յուզուած ու գայթակղած թէեւ, Տիրան
փորձեց սփոփել իր սիրելի բարեկամը :

— Եթէ քիչ մը խորհինք, Վահէ՛, պիտի գտնանք թէ իր
արժանապատուութենէն ու արժանիքէն կը կորսնցունէ մառ-
դը երբ ասանկ պատահականութիւններով զբաղի ու անոնց-
մէ ազդուի, մանաւանդ երբ անոնք եկած են տափակ մար-
դոցմէ որոնք անարժանաբար պաշտօնի մը հասած, կ'ուզեն
իրենց այդ առժամանակեայ տիրողութենէն օգուտ քաղել սին
յաւակնութեամբ մը՝ իրենց կեանքին դիպուածական միակ
առիթը նկատելով ատիկայ : Գաղափարական միտք մը պիտի
գիտնայ արդէն թէ ատոնք չեն կրնար գործ ունենալ գե-
ղագիտութեան հետ :

Եւ Տիրան ալ լռեց՝ նշմարելով որ իր այս խօսքերը սա՛-
ղաղափարին կը յանգէին թէ կարող, մեծ հոգիի տէր մար-
դիկ կը պակսին մեր մէջ և թէ արդիսդ մը չի՛ պիտի հաս-
կցուէր :

Ինծի երկրորդ պատահածն ալ սա՛ է, Տիրա՛ն, ա՛ռ
կարդա :

Օրաթերթի մը մէջ քանի մը տողեր ցուցուց զոր Տիրան
կարդաց :

« Հայ օրիորդները այս տարուան նուագահանդէսներուն մէջ
աւլ մեր ազգը յոյժ պատուաւոր դիրքով ներկայացուցին, եւ
սերը կը մոտենէր թէ միմիայն գեղեցիկ սեռին ինկաւ այս

մատենը, ու ամպոտէ՞ր պիտի, պիտի ալեկոծէ՞ր այդ հրեշ-
տակին ջինջ հոգին ու ալ վե՞րջ պիտի տար այն իտէալ եզ-
բայութեան մը սուրբ մտերմութեան զոր կը տածէր Ֆիմին
իրեն համար... Զէ՛, երբե՛ք չի՛ պիտի գործէր բարո-
յական այս մեծ ոճիւրը, չի պիտի վրդովէր անոր հոգիին դեռ
տարտամ խոհանքները՝ եթէ հարկ ըլլար նոյն իսկ իր կեան-
քին արժէքովը տուժել :

Այս եզրերուն մէջ էր ահա որ Տիրան ճամբորդութեան
վրայ խորհած էր՝ իրմէն ջնջելու համար Ֆիմին տեսնելու
հնարաւորութիւնը :

Ու Վահէի եկաւ, ինչպէս տեսանք, իր «մնաս բարով»ը
ընելու համար :

Բայց Վահէի չեչտուած վիճակը, ակներեւ տառապանքը
իրեն աւելի քան երբեք զգալ տուին թէ պէտք չէր որ
Վահէի այդ վիճակը տեւէր. պէտք չէր որ ան ա՛լ ասանկ հա-
մեստ ու անշուք ապրէր, ալ հերիք էր որքան որ չէ՛ր հաս-
կցուած, ալ պէտք չէր որ անարգութեան այդպէս՝ խուճի խուճի
ծանծաղամիտ արարածներէ :

Այլ սակայն, Տէ՛ր Աստուած, ի՞նչ կրնար ընել, ձեռքէն
ի՞նչ կրնար գալ...

Ու, մինչ Վահէ առդին դպրոցին պատմութիւնը աւար-
տած էր, և ճակատը թեւին վրայ ձգած՝ լուռ կը հեծկըլ-
տար, Տիրան կը խոկար տառապագին...

Մե՛ղք էր Վահէին, մե՛ղք՝ իր կարողութիւններուն ալ
որոնց փճացումին կարծես ամէն բան կ'սպառնար...

Բայց Տիրան այս պահուն նայուածքը մութին մէջ կոր-
սնցուցած՝ լուսաւոր կէտեր կ'ընդնչմարէր, իր աչքերը այդ
պահուն յանկարծ ներշնչողի մը անբացատրելի արտայայ-
տութիւնը առած էին...

Շնչելու կը վախնար : Մե՛ծ, չատ մեծ գաղափար մը սկը-
սած էր ծայր առնուլ գանկին մէջ : — Ինչո՞ւ Վահէ այդ տու-

նին մէջ իր փոխանորդը չըլլար, փոխանորդ մը՝ իրմէն անձ-
նական ու իրական...

Կձուձ հաշիւներու նախապաշարումը կամ սին զգացում-
ներու ապստամբութիւնը գոյութիւն չունէին այս գաղափա-
րին դէմ արգելք հանդիսանալու համար: Ընդհակառակը,
ներքին գոհունակութիւնը ու խինդը իրենց է՛ն անկեղծ
նշոյլները դրոշմած էին այս պահուն Տիրանի դէմքին վրայ:
Ամբողջ ծրագիր մը կը կերտէր այս գաղափարը — ջնջելէն
զատ այն անգութ սեւեռամտածումը որ համբորդութեան
խորհած վայրկեանէն իսկ սկսած էր բզզալ ուղեղին մէջ սա
մտածումով թէ ինքը հոնկէ հեռու՝ կրնար ֆիմի աւամայ օ-
տարականի մը պիղծ գիրկը իյնալ:

Եւ Տիրան կը հաւատար թէ այս գաղափարին գործադ-
րութեան ամէն բան կը նպաստէր: Որովհետեւ մօրեղբայրը
մարդ մըն էր, բարձրհոգի ու կորովի անհատականութեամբ
օժտուած, որ ամբողջ հոգիովը կը սիրէր՝ զեղարուեստները,
երաժշտութիւնը մանաւանդ, եւ որ Արդիսդներու բանաւոր
խառնուածքի մասին խորհրդածուած հաւատք մը ու մաս-
նաւոր յարգանք մը ունէր. «Անոնց մէջ է որ, կ'ըսէր ան,
կարելի է գտնել բո՛ւն մարդը. հոգիի մարդը»:

Եւ Տիրան շատ հեղ, երբ գեղարուեստներու վրայ խօսք
բացուած էր, խօսած էր բարեմտարար Վահէի տաղանդին,
արժանիքներուն ու անոր անյաջողութեան սպառնացող կամ
նոյն իսկ պատճառ եղող շարժառիթներու մասին:

Այդ խօսակցութեանց պահուն, որ երբեմն ժամեր կը տե-
ւէին, Տիրան կրակոտ աւիւնով մը արհամարհած էր ժողո-
վուրդին սա կարծիքը թէ մէկը կը յաջողի, երբ տաղանդ ու-
նի, երբ կամք ունի:

Նախ թէ, կ'ըսէր Տիրան, ժողովուրդը ճիշտ չէ ըմբռ-
նած այս բառը, կամքը, թէ գործնական տեսակէտէ դա-
տելով՝ կամքը կամայական չէ՝ որպէս կ'ըմբռնէ Ան: Ընդ-
հակառակը բնածին կարողութիւն մըն է՝ որ ետքէն չստաց-

նով տոգորուած այսքան ատենէ ի վեր, իր աշխատութեան
ալ զօրավիգը եղած, որքա՛ն անոր գոհացումը տառապանք-
ներ ու խոնջէնքներ մոռցնելու կարող էր: Սակայն չէ՛ր
կրցած վայելել զանի, ու հիմա ասանկ պարզուկ հանդէսի մը
մնացեր էր անով լեցուելու, անով վառուելու համար յան-
կարժ, ինք որ աշխարհածանօթ պիտի ըլլար, ինք որ իր
փառքերովը պիտի գոհանար իր փառասիրութեան մէջ...

— Հանդէսին օրը, սկսաւ շարունակել Վահէ, գացի ու
փափաքս յայտնեցի կառավարիչի մը. գոր պիտի հաղորդէր
տեսուչին ու պիտի իմացնէր երբ կարգը ինծի գար:

«Հոն կ'սպասէի. Ժամ մը անցեր էր երբ յուզումով նըշ-
մարեցի որ կառավարիչը դէպի ինծի կուգար: Բայց երբ
քովս եկաւ, շառագունեցաւ և սկսաւ կակազել:

«— Տնօրէնութեան փոխանորդը՝ *** ըսաւ որ բոսկրամէն
դուրս անանկ բաներ չենք կրնար ընդունիլ:

«Հող, Տիրա՛ն, միայն լալս պակաս էր...»

Վահէ լռեց:

Այս դէպքին՝ երեւութապէս այնքան աննշան՝ ու Վահէի
այդ վերջին խօսքին մէջ կ'ընդունարէր Տիրան անոր ամբողջ
վիշտը ու տառապանքը: Եթէ ան եղած ըլլար այսօր մար-
դոց առջեւ ա՛յն անձը զոր իրեն նիւթապէս ըլլալ տրամա-
դրած էր իր բնութիւնը, այն ատեն ո՛չ միայն չպիտի ցածնար
մինչեւ հոն ուր անարժան նկատուէր դաշնակ զարնել քանի
մը հոգիի ներկայութեան ու ենթարկուէր այդ ծանր նախա-
տինքին, այլ մինչեւ իսկ պատիւ մը պիտի համարէին իրենց
այդ բանը: Տիրան գիտէ՛ր նաեւ թէ ի՛նչպէս այս բաները
հետզհետէ կը ջլատեն անոր խանդը: Վերածուած այս վի-
ճակին, հիւանդ մըն էր Վահէ որ սփոփարար խօսքերու,
քաջալերող բառերու կը կարօտի: Գուրգուրանքի պէտք ու-
նի այն էակը որ մէկ ոտքը դրած է արդէն այն մոխիրնե-

ԿՏՈՐՈՒԱՆՔԸ



Մեկ ծովին բացերն է, աչքդ առածին չափ լայն, ոչ մէկ դիէնց ցամաքի շերտով մը աղտոտուող, անծուփ, անհորիզոն Սեւ ծովին: Իր դոյնը այն անուշ կապոյտներէն է՝ զոր երկինքը ամառ ցորեկին փոխ կուտայ անոր, կարծես մաքրել ու զերով իրեն տխուր անունը:

Փրփրածին հուրիններու պէս՝ աղկիոններ կը թաթխուին հոն ու յետոյ թաց թաց կը թեւածին թափառիկ, զոյգ կապոյտներուն մէջ ցրցնքներով կենդանի հրապոյրը իրենց շուշան փետուրներուն: Մինչ վերը ծիւծիւ ճերմակ ամպեր քոշք կը նետեն եթերին բիւայտին, թողլով որ ծովը գողնայ այս արդուզարդին խուսափուկ թովքը իր հայլին մէջ:

Հեռուն, ամբաւ կապոյտին խորքերէն շոգենաւ մը կ'երթայ. կաթնուղին կ'ակօսուի ետեւէն, ու վերը հեշտօրէն կը ծածանի իր ծխանին քումայթ գանգուրը:

Պատկերը աս է ահա, աղուոր, դիւթող ու շքեղ, որ ջրաներկի մը պատրանքը կուտայ աչքին, զուարթ վրձինի մը անփոյթ քսքսութէն ելած հրաշալի ջրաներկի մը:

... Ո՛վ աչք տնկեց անոր վեհ խաղաղութեանը, ո՛ր հոյն եկաւ լղրճել զայն, մէկ ակնթարթի մէջ սեւցունելով տգեղցնելով բոլորը. վերի ճերմակ քոշքերը ի՞նչ պէս շուտ բգիկ բգիկ եղան:

Հիւսիսը կ'ոռնայ հիմա, պատուհասի նըզովքը կայ իր փշուրին մէջ, եւ մէկ շունչով է որ տարտղնեց ամբողջ հմայքը այդ համայնքին:

Ծովը ցաւի ձայնով մը կուլայ իր ալքերուն տակ թաքթաքուր անտես վհուկներու ծեծին տակ, ու փրփուրներու պարը կայ միայն փլչող ու շինուող ջուրէ բլուրներու գագաթը, մինչ վերը, թուխ ու մուղտ ամպերու քշուածքը ամեհի՝ որ գլխու պտոյտ կուտայ նայողին:

Կը խորհիմ խեղճ նաւուն վրայ, ու այն վարագեղ ծիւղին որ ծխանէն կ'ելլար քիչ մ'առաջ: Գարապրունի խարակներուն վրայ փնտռելու է իր ցրեխ ցրեխ կողերուն բեկորները, բոլոր մէջիններուն հետ ջախջախուած, չքացած:

... Հետեւեալ օրը ծովհանդարտին՝ ճիւղերին սօթթած մարդիկ նոյն խարակին շուրջը եկած՝ փայտի կտոր ու նաւաստի կը հաւքեն սահմուկած դէմքերով:

* * *

Ան երկուքին հոգիները զոյգ կապոյտներն էին անծիր ու անգայտ: Իրենց կեանքի այգուն՝ նայած էին իրարու, նայուածք որ իրարու մէջ փոխանցած էր զիրենք: Սև դրուագ մը չէր եկած դեռ մնտուել կամ կնճուել անոնց հոգիներուն լուրթ հորիզոնները:

Սէրը որ կեանքերնուն միջօրէին սկսած էր տաքնալ՝ աղկիոններու ճերմութիւնը ունէր, մէկ սիրտէ միւս թաթխուող, մէկ սիրտէ միւս թեւածող աղկիոններու, կեանքոտ խնդուն ու անմեղուկ:

Ան վերի սպիտակ ամպերուն պէս ման կուգային միշտ մաքրենի գագաթներու պատառներ, խպնոտ ու լոյս շղարշներ հիւսելով անոնց կոյս երեսին:

Ու նաւը որ նազանքով կ'ակօսէր իրենց երեւակայութեան անանջրպետ ոլորտներուն մէջ, ապագանին չէ՞ր, նոր աշխարհներ որոնող, նոր հանգրուաններու դիմող, կենդանութեամբ առլի, ծիծղո՛ւն ապագանին՝ որ տենջանքի շոգիովը ճամբայ առած՝ օր մը պիտի հանէր զիրենք իրենց տարփանքին պատկեր-վիճակէն՝ փոխադրելու իրական աւետեաց երկիր մը, բաղձացուած երջանկութիւններու կայք մը:

... Ի՞նչ եղաւ յանկարծ որ մթնցաւ տիպար աղւորութիւնը այս կեանքերուն Տղան ի՞նչ բրած ունէր աղջկան՝ որ այդ նամակը ստանար իրմէ, այդ բոցէ նամակը՝ որուն մէջ սիրտի կապերնուն խանձիւն ու խզուիլը կը գուժուէր, աղջիկը ուրիշի մը կցելու համար զայն: Ուրիշի՞ մը... այդ ուրիշը ա-

ւազակը չէ՛ր տղուն երջանկութեան :

Բէ՛հ, ո՛վ կրնայ թափանցել կնոջ սիրտին : Ովկէանի նհանգները ունի ան՝ կապոյտ երեւցող ծեփի մը տակ :

Ու մանչը կը մնար հիմայ իր սենեակին մէջ, աչքերը թրջած կսկիծէն, հոգին այս փոթորկովը խռով : Անէծքը ակռաներուն տակ կը ճզմուէր հիմայ, ու ցասումի քամին եւ քէնի փրփուրը ալափոխած, աւրըշտկած էին իր էութիւնը համբուն :

Փսոր փսոր ըրաւ նամակը ու բոլոր այն ոչնչութիւնները որ անկէ առաջ փոխանակած էին իրարու, եւ լքումով մը որուն դառնութիւնը հոգին չի՛ կրնար մոռնալ երբեք, պատուհանէն վար թափեց զանոնք :

... Պահ մը յետոյ, երբ յուզումը նուազած էր լանջքին տակ, դարձող քանի մը տղաք հոնկէց անցնելուն՝ անգիտակ արգահատանքով մը կը նայէին վար, մայթերուն տիզմին փակած թուղթի այդ կտորուանքներուն, որոնց վրայ կնկան գիրեր կը պարէին տարփանքով ու բոյրով եւ որոնց համայնքը երբեմնի երջանկութիւննին կազմող տարերքն էին...

Դ. Կ. Լապտեշեւ

ՆԵՐԿԱՅԻՆ ՄԷՋ

Հո՛ւ, մորթիս օակ յուզումներ
Կային երբեմն, ասեցով,
Սիրս անոնց մեջ օտուրեր
Դողալով պահ մը գինով...

Տափ, երջանիկ սառսուռներ,
Կնճճոցի ոսիւնով,
Կը սահէին ցնորաբեր
Մորթիս վրային խուլ, վրդով...

Ու երազներ կային դեռ
Վարանոց, սին ու քոթով,

Կուրծիս ետեւ, զերդ լապսեր
Հովին դեմ՝ լուռ քրքրով :

Յոյսեր էին զիս պապեր
Գիշերներու արծաթով,
Կայծեր օրսիս մութ պապեր
Գգուելով մեղմ ճարճաճով :

* * *

...Այս ամէնը ա՛լ չի կայ,
Անդա՛ս ու շու՛ս է քրտեր,
Հին սառսուռներն ալ ճիմայ
Հո՛ւ, մորթի՛ս օակ եմ մեռեր...

Ու միայն բան մ'ունիմ դեռ,
Այն ցուրճ մարմինս է լռից,
Ներկային մեջ անօտուրեր,
Տարակուսող անցեալին...

ԵԴՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ

ԻՍԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԲՈՒԱՐԱՆ

« ՀԱՆՐԱԳԻՏԱԿ », ի

ՀՈԳԵՐԱՆՈՒԹԻՒՆ. — Հոգեբանութիւնը (Ֆրանս. psychologie. որ յոյն փսիխե կամ փսիքի՝ հոգի, և յոդոս՝ բան, ճառ, գիտութիւն բառերէն կազմուած է) կը նշանակէ հոգւոյն և հոգեկան կարողութեանց ծանօթութիւնը կամ գիտութիւնը, և ընդհանուր իմաստասիրութեան կամ փիլիսոփայութեան կարեւորագոյն մասն է : Երբեմն եղանմաժող գիտականներ որք ուրացան թէ Հոգեբանութիւնն առանձին գիտութիւն մ'էր : Այդ հոգեբանութեան գիտականներ յաւակնորէն, չըսենք ամբարշտորէն, Բնախօսութեան կամ Կազմաբանութեան (Physiologie) մէկ մասն համարեցին ու յայտարարեցին Հոգեբանութիւնը : Այլ սակայն հոգեբանական իրողութիւններն ու երեւոյթներն յայտնապէս ու խորապէս տարբեր են բնախօսական կամ կազմաբանական երեւոյթներէն, ինչպէս գաղափարները, յիշողութիւնները, բարոյական կոչուած զգացումները, ամօթխածութիւնը, խղճի խայթը,

երկիւղը, մայրական, հայրական սէրը, յոյսը, փափաքը, ալիւսյալ յուզումները, զգածումները, բոլորովին և խորապէս տարբեր են բնախօսական երեւոյթներէն, այսինքն շնչառութենէն, արեան շրջանէն, մարտաշունչութենէն և այլն: Առաջինները գիտակցութեամբ և անոր գիտողութեանց շնորհիւ կը հասկցուին, կը կատարուին, մինչդեռ վերջինները նախապէս օժանդակ գործիներու օգնութեամբ, զգայարանաց, ներքին գործարաններու միջոցաւ կը կատարուին:

Հետեւապէս Հոգեբանութիւնը բնախօսութենէն տարբեր և մասնաւոր գիտութիւն մ'է: Հոգեբանութիւնը կրնանք բաժնել Փորձառական հոգեբանութեան (psychologie experimentale), որ զիտակցութիւն* (conscience) կոչուած ներքին զգայարանքով կամ հոգեկան տեսակ մը աչքով կը դիտէ, եւ հոգեւոյն ու անոր կարողութեանց, երեւութից կամ գործողութեանց վրայ կը ճառէ, եւ իմացական հոգեբանութեան (rationnelle, բանաւոր) որ բանավարութեան օգնութեամբ կը խուզարկէ այն գոյացութիւնը, էութիւնը որում կը վերաբերին հոգեկան այս երեւութիւնը: Փորձառական հոգեբանութիւնը հոգեկան երեք կարողութեանց (faculté) դասաւորման պէս, կը բաժնուի երեք մասերու, որք կը ճառեն Զգայականութեան Sensibilité), Իմացականութեան (Intelligence կամ Entente) և Կամքին (Volonté) վրայ:

Հոգեբանութիւնը, որ այսօր իրաւամբ կը նկատուի փիլիսոփայութեան հիմը, իմաստասիրական գիտութեանց մէջ նոր բառ մը չէ. նա շատ հնուց իր գոյութիւնն ունէր, թէև իր անունն այսօրուան պէս բաւական նոր թուի կարգ մը ուսացող լսելեաց համար: Կոկլէնիոս անուն գերմանացի փիլիսոփայ մը՝ 1590ին առաջին անգամ վերնագրեց իր իմաստասիրական գործերէն միոյն ճակատը (Hoc est de hominis perfectione anima, ortu, etc.) Փսիքոլոգիա մակագրով, որ արդուած էր ի Մարսլուրկ (Աւստրիական գարիա): Ուրեմն Կարելի բան չէ որ


Սոկրատ, Արիստոտէլ, Պլատոն, Պիւթագոր, Պարմէնիդ, Դէմոկրիտ, Էմպէտոկլէս, Անաքսագոր, եւ այլք, որք հոգեբանական գրութեան վրայ այն խորին տեսութիւններն եւ լայնմիտ խորհրդածութիւններն ունեցած են հոգեկան կարողութեանց եւ հոգեւոյն կամ գիտակցութեան վրայ իրենց անմահ գրուածոց մէջ, անիրագրելի կամ զանցառու եղած լինէին հոգեբանութեան:

Երբ Սոկրատ Դեդափեան տաճարին ճակատը արդէն կանուխէն քանդակուած «Ծանիր զԲեզ» համաւաւոր պատուիրանը՝ իրեն նշանաբան ընտրելով, բարոյականի հիմը կը դնէր, կամ Փիլիսոփայութիւնը բնութեան օրէնքներէն առնելով, մարդը վարող օրինաց անկիւնաքարը կը դնէր, անշուշտ տեղեակ լինելու էր Հոգեբանութեան: Նոյնպէս հին հոգեբանփիլիսոփաներէն Պլատոնի ինչ ինչ տրամախօսութեանց, նա մանաւանդ Ալկիբիադին մ'ը: Արիստոտէլի հոսք զհոգեւոյն անուն գրուածքին մէջ, եւ քրիստոնէութեան ԴոԴ և ԴԲ դարերուն մէջ Նազիրանցի, Նիսացի, Գրիգոր Հայրապետներու եւ Յովհան Ոսկեբերանի ատենները Նէմէսիոսի կամ Աղամանդիոնի «Զբնութենէն մարտիկ» անուն իմաստասիրական գործոյն մէջ զանց առնուած չեն արդի հոգեբանութեան իմաստով տեսութիւններ: Միջին դարու մէջ ուր իմաստասիրութեան վիճաբանական կերպը (dialectique) աւելի տիրող էր, հոգեւոյն գոյութեան վրայ իսկ կը տարակուսէին, զի մինչեւ իսկ կը հաւտային թէ կիներ հոգի չունի: Թէև այս ողորմելի միտումնաւորները չէին խորհեր թէ գիրենք ծնող կնոջ կամ մօր նախամայրը՝ Եւա՝ կին մ'էր, թէ Քրիստոնէութեան հիմնադիր Յիսուս՝ կնոջ մը արգանդը փոխ առած էր, և թէ իրենք իսկ իրենց մարմնոյն հետ և իրենց հոգին կին մօրմէ ընդունած էին: Տէգարդ յետոյ՝ իր «Cogito, ergo sum» «Կր խորհիմ, ապա գում» նշանաւոր առածին փոխարկելով «Ծանիր զԲեզ»-ը իր աշակերտաց հետ հոգեւոյն գիտութիւնը դրաւ փիլիսոփայութեան հիմը:

Շարունակելի

Ա. Լ.

*ՄԱՆՈՒՄ. — Հոս խնդիրը հօգեբանութեան գիտութեան (conscience psychologique) վրայ է, զոր պէտք չէ շփոթել բնական գիտութեան (conscience morale, խիղճ) հետ, որ մեր պարտականութեանց խորհրդատուն ու մեր գործոց զատաւորն է:



ԱՄՈՒՍՆԱԼՈՅԾՆ ԱՊԵՐՋԱՆԻԿ

ԳԻՒՂԱՎԷՊ

Մասն Ա.

ՈՒՆՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Գիւղին սովորութեան համեմատ, ուստաւորք 10—15 օրի չափ հիւր կը մնային ուխտատեղւոյ վանքերուն մէջ, արք՝ Աղամայ Պարսեղ և կանայք ու աղջկունք՝ Նւայի Զորանուն երկու վանուց մէջ զատ զատ։ Այնպէս կը հաւատային թէ Ս. Լուսաւորիչ շինորէ Արանց վանքը, իսկ Գայիանէ Կոյսն ալ Կանանցը։ Հայ. եկեղեցւոյ Հիմնադիր Թադէոս և Բարթողիմէոս առաքեալներն ալ նախ հոն քարոզեր, նոյն տեղի կուռքերն ու կուտունները, զորօրինակ, Աստղիկինը, Անահիտինը, Վանատուր Արամազդինը և այլոցը կործաներ և վանքերու, եկեղեցիներու վերածեր էին։ Տեղացիք սովորած էին Մայիս 24ին հոն ուխտի երթալ, զի աւանդութիւն մը սերունդէ սերունդ, դարէ դար անընդհատ իբր ստոյգ կը պատմէր թէ առաջին եկեղեցին Մայիսի 24ին հոն հաստատուած էր։ Այս աւանդական յիշատակին համար է որ գեղացիք նոյն ուխտատեղիներու միւս յատուկ ծաղիկ մը ցարդ կը կոչեն Մայիս-Ծաղիկ։ Ամէն ուխտաւոր այդ ծաղիկէն փունջ մը միշտ իր տան մէջ իրեն վրայ կը պահէ յուռութի հմայեկի պէս (նուսխա, համայիլ), որ իբր թէ ամենաբոյժ և հրաշագործ է, իբր թէ Մայր Աստուածածին, հոն այցելած ատեն, արտասուեր է իր Միածինին խաչելութեան պատկերին առջեւ, և արցունքին կաթիլը՝ արտասուած խորանին վրայ՝ Վարդավառի տաղաւարին օրը այդ ծաղիկէն իբր արգադիր նուէր ընծայուած ու զետեղուած փունջին վրայ կաթեր է, որոյ թուումը վիճակը իսկոյն գոյափոխուելով՝ պարտէզի մէջ նոր ծլած, նոր ծաղկածի մը պէս դալարացեր է։ Աւանդութիւնը կը յաւելու թէ Մայր Աստուածածին իբր թէ ըսած ըլլայ. «Այս ծաղիկը իմ բարեխօս լինելուս

խորհրդանշանն ըլլայ։ Ո՛վ որ այս ծաղիկն իր պարտէզին, արտին, տանը կամ անձին վրայ ունենայ, ամէն ցաւէ ցեցէ ազատ ըլլայ։ Կին մը որ դաւակ չի բերեր, եթէ նոյն իսկ նոր Սառայ մը ըլլայ, Աբրահամու սեսունդին չափ բազմածին լինի։ Կին մը որուն կաթը կտրած կամ ցամքած է, Մովսէսին ջուր բղխեցուցած ժայռերէն աւելի առատարուղիս լինի։ Կին մը՝ որ դժուարաւ կը ծնի կամ ծնածը կ'անցընէ, բժշկուի հրաշքով և փեսայ ու հարս դաւակներու տէր լինի։ Կին մը՝ որ այրի մնալ չուզեր, կամ աղէկ ու հարուստ փեսայ կամ հարս մը ունենալ կը փափաքի, արժանանայ, հասնի՝ իր փափաքին ու բախտին, այս ծաղիկին շնորհիւ։ մարդ մը՝ որ հաւատարիմ եւ ողջախոհ կին մը, աղջիկ մը ունենալ կը բաղձայ, պէտք է որ այս ծաղիկէն մաս մը, ճեղ մը իր վրայ կրէ և իր տան մէջ պահէ։ Ուստի այս Մայիս Ծաղիկէն յօրինուած այլևայլ փունջերով և պսակներով իրենց կուրծքն ու գլուխը զարդարած, իրենց օժիտը կամ օժիտցուն լինելիք պահեստի կամ տօնական հագուստները ճոխօրէն, շալլօրէն հագած էին ուխտաւորք իրենց երկրին սեպհական տարազներուն համակերպ։ Համարէ՛ թէ հին առածի մը բացատրածին պէս «պահեստի գանձն ու սնուկը ամէն գիւղացի կրօնակը շալլած» ուխտի կ'երթային։ 10—15 օրուան ուտելիքներն ալ իրենց հետ մէկտեղ իբր պաշար առնելէ զատ՝ այլևայլ Սուրբերու ու Սրբուհիներու մասնաւորապէս մատուցուելիք մատաղցու ոչխարը, գառը, այծը, ուլը, կովը, հորթը, հաւը, վառեկը, և ուրիշ այս կարգի անհրաժեշտ սեպուածներն ալ ի միասին կը տանէին։

Բացի այն արծաթ, ոսկի և ուրիշ կարգ մը թանկագին նուէրներէն, զորս մէն մի գիւղացի տարուէ տարի իր աստիճանին եւ կարողութեան համեմատ սովորական պարտականութիւն կը համարէր նուիրել այն Ս. Տեղեաց, այս օրուան ուխտադնացութիւնն ուրիշ շատ մը նուիրական, աւանդական սովորոյթներ ալ ունէր։

Աղամայ Պարսեղ և Նւայի Զոր վանքերու եկեղեցիներուն մէջ պիտի պսակուէին ժամանակն հառած փեսացու, հարսնջու նշանածները։ Հոն պիտի նշանուէին մանչ

Թէ աղջիկ Մայիսի Ծաղիկ մը իրարու խօսք-կապ տալով: Հոն ստնտու մայրեր՝ Պեթիկ Բերքմեով, այսինքն «որրանի եւ կամ խանձարուրի խօսք-կապ» սիրով կը նշանէին իրենց արու և էգ զաւակները: Սոյն ուխտագնացութիւն ո՛չ միայն կրօնքի, այլև Հարսնիքի, Նշանուութի, Մատաղի, Հասասարակաց Ագապի (հէրվանէ) տեսակ մը — և ամէն տեսակ — հանրային հանդէսներու, տօներու մեծ Օրն էր: Սոյն կրօնական-աշխարհական ուխտագնացութեան աւանդական սովորութիւններէն մին ալ սա էր որ ուխտաւորներէն կանայք, աղջկունք, երիտասարդք, արք, ծերունիք, զատ զատ խումբով կը վաչկաչուէին: Ամենքն ալ իրենց հասակին, աստիճանին, սեռին, ճաշակին ու մտադրութեան յատուկ զարդերով ու զէնքերով՝ զիրար զլելու չափ նախանձելի ճոխանքով, ճախանքով շքուած շքաւորութեամբ կը լլային: Ոսկին արծաթը, կերպասն ու բեհէզը, ծաղիկն ու ծիծաղն ամէն գէտքերն և կերպարանքները գունագեղ ու բազմագեղ երեւոյթով կը գերազանցէին: Գիւղին հոգին միտքն ու սիրտը այն օրը, Մայիս 2-ի օրը, հոն ներկայ կը հանդիսային: Պատմաբանօրէն ո՛րքան ստոյգ, իմաստասիրօրէն ո՛րքան նշանակիչ էր սոյն ուխտագնացութիւն, զրոգէն աւելի — որ լոկ հասարակաց Թարգման մէջ — Թող դատէ՝ ընթերցողը իր հանրային ողջմտութեամբ:

Ուխտաւորք արդէն հասած էին իրիկուան դէմ՝ դէպ յերուսաղէմ, էջմիածին, Ս. Կարապետ կամ Սիրուանայ վանքը ուխտի գացող բարեպաշտ ժողովուրդի մը համադիտաւորութեամբ ու նպատակով: Ադամայ Պարտէզ և Սեայի Ձոր վանքերն իրենց բնակիչներով պարպատելու չափ լիացած ու զետեղուած էին: Խոնջեցնէր, Մասաղ ճաւերհն ու տօնական հանդէս-ընթրիքն աւարտած էին: Կարգ ու սարքն եկած հասած էր, Ժամերգութիւնէն յետոյ, օրուան հարսներու, փեսաներու աւանդական ու սովորական հալալ օրհնէքը ձեւակերպելու, որ կը կատարուէր արտասովոր շքեղութեամբ:

Շարունակելի

ԼԵՐԱՆ ՀԻՒՂՍԿԸ

Ս. Ռ. Սողիշէ Եպիս Դուրեան

Յաղթ լեռանց ծոց, քարանձաւին ալ մօրիկ՝
Ուր կը բուսնին վայրի ցրմախ ու դրժնիկ,
Հո՛ն, սարասափ առլեփ հողի մը կուտօին
Իր հիմունքը կ'երկարձրգէ սա՛ խրտօին:

Ի՛նչ աղուո՛ր է. բնութեան ըստինքն է հոն
բա՛ց.

Ու կը ծրծէ հով-կարն անուշ այդ յրսեանց
Տունն այդ անցո՛ւմ, յարկն այդ մինա՛կ ու
խարխո՛ւլ.

Ձուարթ կ'երգէ սոխակն անդ, եւ մայի ուլ:

Նրջանի՛կ տուն՝ կանաչագե՛ղ լեռներուն,
Ինէր բնկեր խրո՛խս նոնեաց, որք հեռո՛ւն
Կ'երկարեն տունն իրենց հրակա՛յ հասակին.

Ու անցորդներ, քաղի մարդիկ անցարբեր,
Հարցրենք մերք տանն յառելով ակնարկին.
— Պատանի՞ մ'ե, է՛հ, ինքնաբո՛յս, այս տան տէր.
22 Յունվ. 900 Մ. Յ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Մեծայարգ Ռ. էֆ. Որբերեան սրտառուչ նամակով մը կը յայտարարէ մեզ թէ իր պարտքը ամբողջապէս հատուցած է իր ազնիւ բարեկամ Տ. Վառձապուհ Հօր, Բարիգի արժանընտիր հովուին, եւ կը հարցնէ մեզ թէ կը հաճին՞ք պարզել ապերաստան բառը: Անշուշտ այդ բառին նշանակութիւնը չէ՛ որ սովորիլ կ'ուզէ մեզմէ. այդ բառով մեք որակել ուզած ենք այն բոլոր բերանները, որք իրենց մէկ սիրական՝ հոգեկցորդ եկեղեցականը ջատագովել ուզած ատեն, չեն խղճար Հայ եկեղեցւոյ, բովանդակ Հայ եկեղեցականութեան վրայ մուր քսել. եւ անշուշտ Որբերեան էֆ. չընդունիր ատոնցմէ ըլլալ, քանի որ այնքան հաճոյակատարութեամբ համակերպութիւն կը յայտնէ Իզմիրի հողեւոր պետին տալիք ապաշխարանքը կրելու խոնարհաբար:



ՔԻՉ ՍԸ ԽՆԴՈՒՔ

Պ. Ն***, մեծահարուստ անձ մը, այսինքն կծծի մը, չուզեր դրամ տալ իր զաւակին որ գործի մը կը ձեռնարկէ:

Արդ Պ. Ն* ձգեաւ (ըզորք, զգայաւոր) ունի, որ երբեմն կը բռնէ, եւ զոր անցունելու համար հարկ էր վախ պատճառել:

Անցեալ օր յանկարծ կը բռնէ ձգեաւը:

— Զաւակս, չո՛ւտ, վախցուր զիս.

— Ինձի հազար ոսկի տո՛ւր որ վախց...

— Ծնորհակալ եմ, անցաւ:

* * *

Սափրիչ Լ*** իր յաճախորդներուն մազը կտրած ատեն սրտայոյզ պատմութիւններ ընելու սովորութիւն ունի: Անցած օր յաճախորդներէն մին՝ ձանձրացած՝ այս բանին պատճառը կը հարցնէ.

— Պատճառը սա՛ է որ, կը պատասխանէ սափրիչը. այս կերպով մազերը կը ցցուին, եւ դիւրին կ'ըլլայ կտրել զանոնք:

* * *

Պ. Բ***, ճշմարիտ չտեսմը, կառք նստած է, եւ որպէս զի ուրիշները տեսնեն զինքը կառք նստած վիճակի մէջ. աչքը տուններու պատուհաններուն յառած է:

Արդ անձանթ մը յանկարծ պատուհանը բանալով կը գոչէ.

— Կառքը որո՞ւ կը տանիս կոր:

* * *

Տիկինը. — Թորոս աղբար, չուտ վեր եկո՛ւր, գող կայ, գո՛ղ:

Սպասաւորը. (Անկողնէն ելնելով եւ վեր վաղած ատեն յանկարծ կանգ առնելով). — Աւանտ՝ կը, ոտքերն անգամ չէ սրբեր:

* * *

Սալօնի մը մէջ հարցախաղի ատեն, սա հարցումը կ'ուղղուի.

— Բժիկները ի՞նչ են.

Բժիշկ մ'է որ կը պատասխանէ.

— Մեռնողներուն հիւանդութեան անունը:

* * *

Իրիթը չտեսնելու աստիճան կարճատես մը ճամբան դացած պահուն յանկարծ օդային կազի լապտերի մը ձողին կը զարնուի.

— Բառտօն, մատամ, կ'ըսէ գլխարկը հանելով:

Անցորդ մը իրեն դիտել (կամ երեւակայել) կուտայ թէ ձողի մը հետ կը խօսէր:

Դանի մը քայլ հազիւ առած, եւ ահա տիկնոջ մը կ'ընդհարի մեր մարդուկը:

— Խե՛րդ անիծեմ, ձո՛ղ, կը պողայ դաւազանը վեր վերցնելով, հարուած մը իջեցնելու բառնալիքով:

Տիկնոջ սարսափի ճիշդ սակայն կը կասեցնէ հարուածը:

Վայրկեան մը ետք, կառքի մը ձիուն զարնուելով, ուրիշ ձին կը խրտչի, կարճատեսը գլխարկը կը հանէ,

— Բառտօն, մատամ, պողալով:


* * *

Պարոն մը եւ տիկին մը բուռն վիճաբանութեան բռնուած են: Պարոնը կը պնդէ որ այրերը միշտ անբաղդատելի կերպով բարձր եղած են կիներէն: Տիկինը սակայն, նրբամիտ սատանորդուհի մը կը յաջողի ջրել անոր բոլոր ապացոյցները:

— Նոր ապացոյց մ'ալ գտայ ահա, կը գոչէ յանկարծ պարոնը, ապացոյցներէս ամէնէն մեծը: Աստուած երբ այրը կ'նոյմէ առաջ ստեղծեց, պատճառն ա՛յն էր որ ուղեցուցնել այր մարդուն բարձրութիւնը:

— Ընդհակառակը, կը պատասխանէ կինը միշտ իր հեգնող քմիծաղով. ընդհակառակը, Աստուած ատով կիներն անթերի ստեղծեց, ըստ որում, ամէն գեղեցիկ գործ նախափորձի (brouillon) մը պէտք ունի:

Ս.



Արտօմաք. — ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԱՆ

ԳՐՊԱՆԻ ԲԱՌԳՐՔՈՅԿ

ՖՐԱՆՍԱՀԱՅ

Գին 5 Ղրուշ

800 փոքրագիր երեսներէ բաղկացած սիրուն գրքոյկ մը, որ 13—14,000 բառերու ու ներու եւ ընթանեկան ասացուածներու հաւաքոյթ մ'է եւ Ֆրանսերէն ուսանողներու անբաժան ընկերը: Գնեցե՛ք մէկ մէկ օրինակ եւ ձեր զաւկին ձեռքը տուէ՛ք, վստահ ըլլալով որ այդ գրքոյկ պիտի սրէ անոր ուսման փափաքը: 10 օրինակ մէկէն առնողին 30 առ 100 զեղչ: Դիմեցե՛ք միայն Հանրագիտակի Տնօրէնութեան:

Պատկերազարդ Աշխարհագրութիւն

ՊՕԶԱՃԵԱՆ

Գին 4 ղրուշ

Լոյս տեսաւ Ն. Պերպիեան մաթուր տպագրութեամբ, բազմաթիւ փոփոխութեանց եւ Կրթական ծրագրին համաձայն: Մայրաքաղաքիս է՛ն կարեւոր դպրոցներն անմիջապէս ընդունեցին զայն իրենց դասագրոց ցանկին մէջ:

Փնտեցե՛ք 1900ի տպագրուածը, որ 204 էջերէ կը բաղկանայ, եւ իր պարունակած պատմական, գիտական, առեւտրական եւ ցեղային ծանօթութիւններով, աշխարհագրութեան Ա. դասագիրքը կը հանդիսանայ եւ արժանի է ամէն ուսուցչի ու տպագրութեան:

Հանրագիտակի Տնօրէնութիւնը կը հայրապէ մեծաքանակ 30 առ 100 զեղչով:

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՕՐԷԻՑ

Կրէկուառ Ղազարօժ եւ Ընկ.

Պատիւ ունինք ծանուցանել թէ վաճառատունս փոխադրուած է Սասըգիէ խան թիւ 1 եւ 2: Եւրոպոյ բոլոր կեդրոններուն հետ իր ունեցած յարաբերութեանց շնորհիւ, քաւմ դեղինու անհուն պէտքիսութիւն մը միշտ պատրաստ ունի մեծաքանակ, ինչպէս նաեւ տեղեւորական համբաւ վայելող եւրոպացի բժիշկներու մասնագիտական պատրաստ դեղերը ու ամէն տեսակ հանձնարարութիւնները: Գաւառներէ եղած յանձնարարութիւնք նշանակաւոր ու փութով կը կատարուին, անմիջեւի կերպիւ ածանցեցնելով:

Դիմեցե՛ք եւ պիտի համոզուիք:

ԿԱՌՆԵԻՈՐ Ա.ԶԴ.— Հանրագիտակի կողքին երեք էջերը ծանուցմանց յատկացուած են: Անոնք որ կը հաճին մէկ տարեկան բաժանորդագրուիլ, կրնան իրենց ծանուցումները ԶՐԻ հրատարակել տալ, 10 ական տող, 5 անգամուան համար. իսկ 50 տող մէկ անգամուան համար:

Բաժանորդագրութիւնք կ'ընդունուին, եռամսեայ, վեցամսեայ եւ տարեկան:

ՄԵՐ ՀԱՍՏԷՆ

«Հանրագիտակի» վերաբերեալ ամէն գրութիւն պէտք է ուղղել Նեան Պերպիեան տպարանը, Էսփ զապթիյէ ճասէսի թիւ 61, առ Տնօրէնութիւն եւ Խմբագրութիւն «Հանրագիտակի»:

ՌՕՍԻԱ.—ROSSIA

Ա Պ Ա Հ Ռ Վ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՀՐԴԵՅՔ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՅՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին	34,775,642 ֆրանք
Երաշխաւորութեան գումար	121,765,333 »
1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած	164,172,000 »

Կեդրոնացեղի, Քարափին վրայ, Մաքսսան ճին տեղը

Ընդհ. քննիչ
Ա. ՀԻՒՐՄԻՒՋ

Ընդհ. Դործակալ
ԹԷՈՏՈՐ ՌԷՐՔԷՆ

Է Ք Ի Թ Ա Պ Լ

(ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ)

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԱՄԵՆԷՆ ՀՁՕՐ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ԵՐԱՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ ՄԵԿ ՄԻԼԻԱՌ 451 ՄԻԼԻՈՆ ՅՐԱՆՔ



1898ին՝ ԷՔԻԹԱՊԼ իր ապահովագրեալներուն բաժնած է աւելի քան 15³/₄ ՄԻԼԻՈՆ ֆրանք շահաբաժին

[Այսինքն նշան տարւոյ մէջ Ֆրանսական ՄԻԱՅԵԱԼ 17 ընկերութեանց բաժնած շահերու համագումարին գրեթէ կրկնել]:

Ախարհիս մէջ գտնուող ոչ մէկ ընկերութիւն

ԷՔԻԹԱՊԼԻ չափ գործառնութիւն ունի

ԷՔԻԹԱՊԼԻ չափ պահեստի դրամ ունի

ԷՔԻԹԱՊԼԻ չափ շահաբաժին կը վճարէ

Հետեւաբար ոչ մէկ ընկերութիւն կրնայ աւելի ԱԺԱՆ եւ աւելի ՇԱՀԱԻՏ քնծայել կեանքի ապահովագրութիւնը՝ որքան ԷՔԻԹԱՊԼ:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍԵՂԱՆԱՌՔ

ԼՆՆՈՒՆ

Բարիզ եւ Կ. Պոլիս, Գրէտի Լիոնէ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԹՈՒՐԻՒՆՑ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Կ. Պոլիս, Պաճէ Գաբու, Անանիատի Խան